Գլուխ 4 Վերազգային կորպորացիաների և միջազգային տնտեսական կազմակերպությունների ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա

4.1 Վերազգային կորպորացիաներ

Վերազգային կորպորացիաների էությունը: Ներկայիս ՀՏ բնորոշ է վերազգայնացման գործընթացը: Այս գործընթացում խթանող ուժ են հանդիսանում վերազգային կորպորացիաները: Դրանք իրենցից ներկայացնում են տնտեսական միավորումներ, որոնք բաղկացած են մայր ձեռնարկությունից և արտասահմանյան մասնաճյուղերից: Մայր ձեռնարկությունը մասնաճյուղերի կապիտալում մասնակցության ճանապարհով վերահսկում է միավորման մեջ մտնող ձեռնարկություններին:

Վերազգային կորպորացիաները հանդիսանում են կապիտալի միջազգային շարժի և տեխնոլոգիաների փոխանցման միջոց, որոշում են համաշխարհային շուկայի դինամիկան, կառուցվածքը և մրցունակության աստիճանը:

Գրեթե բոլոր խոշոր վերազգային կորպորացիաները պատկանում են «Եռյակին»՝ ԱՄՆ, ԵՄ և Ճապոնիա: Վերազգային կորպորացիաների ճյուղային կառուցվածքը տարբերակված է: Վերազգային կորպորացիաների 60%-ը ներգրավված են էլեկտրոնիկայի, մեքենաշինության, քիմիական և դեղագործական արդյունաբերության մեջ, 37%-ը ծառայությունների ոլորտում, 3%-ը արդյունահանող արդյունաբերությունում և գյուղատնտեսությունում:

Վերազգային կորպորացիաների մասնաճյուղերը լինում են.

1. վերազգային կորպորացիայի համակարգի մեջ մտնող դուստր ձեռնարկություններ: Այստեղ մայր ձեռնարկությունն ունի որոշիչ ձայն, կարող է տիրապետել բաժնետոմսերի կեսից ավելին և նշանակում է ձեռնարկության ղեկավարին,
2. վերազգային կորպորացիայի համակարգի մեջ մտնող միավորված ձեռնարկություն: Այստեղ մայր ձեռնարկությունը կարող է տիրապետել ընդհանուր բաժնետոմսերի 10%-ից ոչ քիչ և 50%-ից ոչ ավելի: Մայր ձեռնարկությունը չի վերահսկում, սակայն մասնակցում է ձեռնարկության վերահսկման գործընթացին,
3. բաժանմունքային ձեռնարկություն: Սա հանդիսանում է արտասահմանյան մասնաճյուղի ձև, որը ամբողջությամբ պատկանում է մայր ձեռնարկությանը:

Վերազգային կորպորացիաների կառավարման կառուցվածքը սովորաբար որոշվում է ելնելով արտադրվող ապրանքների և ծառայությունների տեսակներից: Այն կորպորացիաները, որոնք մասնագիտանում են միատեսակ ապրանքների արտադրության մեջ կառավարվում են աշխարհագրական սկզբունքով: Բազմատեսակ արտադրությամբ զբաղվող վերազգային կորպորացիաները սովորաբար օգտագործում են կառավարման ապրանքային սկզբունքը:

Վերազգային կորպորացիաների դերը համաշխարհային տնտեսության մեջ: Վերազգային կորպորացիաներն ունեն զարգացման երկար պատմություն և գրեթե իրենց առաջացման պահից ի վեր ազդեցություն են ունեցել այն տնտեսությունների վրա, որտեղ դրանք գործել են: Վերազգային կորպորացիաների ազդեցությունը տարածվում է

- դրանց ծագման երկրի վրա,
- դրանց կողմից գործունեություն ծավալած երկրների վրա
- երրորդ երկրների վրա, որոնք անուղղակիորեն կապված են վերազգային կորպորացիաների հետ:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ վերազգային կորպորացիաները զգալի ազդեցություն են ունեցել համաշխարհային տնտեսության զարգացման վրա և մինչև օրս շարունակում են ունենալ:

Վերազգային կորպորացիաների գործունեության արդյունքում դեպի դրանց կողմից գործունեության ծավալած երկրներ են տեղափոխվում գործարարության ատրիբուտները, այդ թվում կապիտալը (օտարերկրյա ուղղակի ներդրումներ, ՕՈՒՆ), մարկետինգի մեթոդները, փորձը, տեխնոլոգիաները և կառավարման համակարգը:

Ներկայիս պայմաններում այս ընկերությունները շատ կարևոր են տնտեսության զարգացման համար (թե զարգացած և թե զարգացող երկրներում): Այս պատճառով պատահական չէ, որ այսօր ՄԱԿ-ը դրանց համարում է, որպես տնտեսական աճի «շարժիչ ուժ»:

Ժամանակի ընթացքում վերազգային կորպորացիաներն ավելի են ամրապնդել իրենց դիրքերը համաշխարհային տնտեսության մեջ: Այսպես, եթե 1960-ական թթ.

գրանցված էին մոտավորապես 7000 վերազգայի ընկերություններ[1], իսկ 1990-ական թթ. դրանց թիվը կազմում էր 37000, որոնց բաժին էր ընկնում առնվազն 170000 դուստր ձեռնարկություններ, ապա արդեն 2005թ. դրանց թիվը գրեթե կրկնապատկվեց՝ կազմելով 70000, իսկ դուստր ձեռնարկությունների թիվը քառապատկվեց՝ կազմելով 680000[2]: Մյուս կողմից, քանի որ վերազգային կորպորացիաները համարվում են ՕՈՒՆ-ի հիմնական աղբյուր, ապա ժամանակի ընթացքում համաշխարհային տնտեսության մեջ դրանց դերի ամրապնդմամբ զգալի ավելացել է նաև ՕՈՒՆ-ի ծավալը: Այսպես, 1982-2006թթ. ընկած ժամանակաշրջանում ՕՈՒՆ-ը 28 մլրդ. դոլարից աճել են մինչև 1.21 տրիլիոն դոլար, իսկ դրանց դուստր ձեռնարկությունների և մասնաճյուղերի կողմից արտահանման ծավալը նույն ժամանակաշրջանում 688 մլրդ. դոլարից աճել է մինչև 4.7 տրիլիոն դոլար[3]:

Ինչպես նկատում ենք Աղյուսակ 4.1-ից 2011-2014թթ. ընկած ժամանակաշրջանում զգալի նվազել են ՕՈՒՆ ծավալը համաշխարհային տնտեսության մեջ: Սկսած 2015թ.-ից համաշխարհային տնտեսության մեջ նկատվել է ՕՈՒՆ-ի զգալի աճ՝ 2016թ. կազմելով 1,746 մլրդ. դոլար, ինչը 31.8% գերազանցում է 2014թ. ՕՈՒՆ-երի մակարդակը: Այստեղ հարկ է նշել, որ 2015թ. դեպի զարգացող երկրներ ՕՈՒՆ-ի ներհոսքի ծավալը 752 մլրդ. դոլար (համաշխարհային ՕՈՒՆ-ի արտահոսքի 42.4%) երբևէ գրանցված ամենաբարձր ցուցանիշն է համարվում: Զարգացող երկրների վերազգային կորպորացիաները վերջին շրջանում զգալի ակտիվ են Աֆրիկայում: Այսպես, զարգացող երկրներից Մալազիան (19 մլրդ. դոլար), Չինաստանը (16 մլրդ. դոլար) և Հնդկաստանը (14 մլրդ.) հանդիսանում են ՕՈՒՆ-ի հիմնական աղբյուր Աֆրիկայում[4]: Նշված երկրների վերազգային կորպորացիաների կողմից իրականացվող ՕՈՒՆ-ը ներառում են տնտեսության գրեթե բոլոր ոլորտները և ունեն բավականին տարբերակված աշխարհագրություն Աֆրիկայում:

[1] Աղբյուր՝ van Tulder R. and van der Zwart A. (2006). International Business–Society Management: Linking Corporate Responsibility and Globalization. London: Routledge.
[2] Աղբյուր United Nations World Investment Report, 2005.
[3] Աղբյուր՝ United Nations World Investment Report, 2007.
[4] Աղբյուր՝ United Nations World Investment Report, 2015.

Աղյուսակ 4.1 ՕՈՒՆ-ի հոսքերը ըստ երկրների խմբերի և տարածաշրջանների 2010-2016թթ.

Տարածաշրջան	ՕՈՒՆ ներհոսք							ՕՈՒՆ-ի արտահոսք						
	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Համաշխարհային	**1,409**	**1,652**	**1,351**	**1,467**	**1,324**	**1,774**	**1,746**	**1 505**	**1 678**	**1 391**	**1,306**	**1,253**	**1594**	**1452**
1.Զարգացած	**696**	**820**	**561**	**697**	**563**	**984**	**1,032**	**1 030**	**1 183**	**909**	**834**	**708**	**1,173**	**1,044**
2.Զարգացող	**637**	**735**	**703**	**671**	**704**	**752**	**646**	**413**	**422**	**426**	**381**	**473**	**389**	**383**
2.1 Աֆրիկա	44	48	50	54	71	61	59	9	5	14	16	28	18	18
2.2 Ասիա	401	436	407	428	460	524	443	284	311	308	335	412	339	363
2.3 Լատ. Ամերիկա	190	249	244	186	170	165	142	119	105	103	28	31	31	1
Անցումային	**75**	**96**	**87**	**100**	**57**	**38**	**68**	**62**	**73**	**55**	**91**	**73**	**32**	**25**

Աղբյուր՝ Աղբյուր՝ United Nations World Investment Report 2017.

Չնայած այն հանգամանքին, որ այսօր արդեն հաշվում են 70000-ից ավելի վերազգային կորպորացիաներ, դրանց շարքում գլոբալ դերակատարումը/ազդեցությունը պատկանում է մի շարք առավել խոշոր վերազգային կորպորացիաներին: Վերազգային կորպորացիաներին կարելի է դասակարգել օրինակ հիմք ընդունելով տարեկան եկամտի մակարդակը, շուկայական կապիտալիզացիայի ծավալը կամ օտարերկրյա ակտիվների ծավալը: Fortune Global 500 դասակարգում է վերազգային կորպորացիաներին ըստ եկամտի մակարդակի: Աշխարհի խոշորագույն 500 ընկերություններին 2016թ. բաժին է ընկել մոտ 27.7 տրիլիոն եկամուտ և 1.5 տրիլոն շահույթ 2016թ.: Միևնույն ժամանակ այդ ընկերություններում աշխատել է մոտ 67 մլն. մարդ և այդ ընկերությունների աշխարհագրությունը կազմել է 34 երկիր: Fortune Global 500 դասակարգման համաձայն 2016թ. տվյալներով առաջատար 10 վերազգային կորպորացիաներն էին՝

Աղյուսակ 4.2 Առաջատար 10 վերազգային կորպորացիաները 2016թ. ըստ տարեկան եկամտի մակարդակի

Ընկերության անուն	Ծագման երկիր	Հիմնադրման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Աշխատողների թվաքանակ (հազ. մարդ)	Տարեկան եկամուտ (մլրդ.)
Walmart	ԱՄՆ	1945	Մանրածախ առևտուր	2,300	485.8
State Grid	Չինաստան	2002	Էներգետիկա	926	315.1
Sinopec Group	Չինաստան	1988	Նավթի և գազի արդյունաբերություն	713.3	267.5
China National Petroleum	Չինաստան	1999	Նավթի և գազի արդյունաբերություն	1,500	262.5
Toyota Motor	Ճապոնիա	1937	Ավտոմեքենաներ և մասեր	364.4	254.6
Volkswagen	Գերմանիա	1937	Ավտոմեքենաներ և մասեր	626.7	240.2
Royal Dutch Shell	Նիդերլանդներ և Մեծ Բրիտանիա	1907	Նավթի և գազի արդյունաբերություն	89.0	240.0
Berkshire Hathaway	ԱՄՆ	1889	Ապահով., անշարժ գույք և այլն	367.7	223.6

Apple	ԱՄՆ	1977	Համակարգիչներ և մասեր	116.0	215.6
Exxon Mobil	ԱՄՆ	1870	Նավթի և գազի արդյունաբերություն	72.7	205.0

Աղբյուր՝ Fortune Global 500

Առավել խոշոր կորպորացիաների դերը համաշխարհային տնտեսության մեջ էլ ավելի է ընդգծվում, երբ դրան ավելանում է աշխարհագրական կենտրոնացումը՝ ելնելով մայր ձեռնարկության գտնվելու վայրից: Այսպես, աշխարհի խոշորագույն 500 վերազգային կորպորացիաներից 425 կամ դրանց 85% բաժին է ընկնում հետևյալ 10 երկրներին՝ ԱՄՆ-132, Չինաստան-109, Ճապոնիային-51, Գերմանիա-29, Ֆրանսիա-29, Մեծ Բրիտանիա-21, Հարավային Կորեա-15, Նիդերլանդներ-15, Շվեյցարիա-13 և Կանադա-11:

2016թ. տվյալներով, շուկայական կապիտալիզացիայի ծավալով տաս ամենախոշոր վերազգային կորպորացիաներն էին՝

Աղյուսակ 4.3 Առաջատար 10 վերազգային կորպորացիաները 2016թ. ըստ շուկայական կապիտալիզացիայի ծավալի

Ընկերության անուն	Ծագման երկիր	Հիմնադրման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Աշխատողների թվաքանակ (հազ. մարդ)	Շուկ. կապիտ. (մլրդ.)
Apple	ԱՄՆ	1977	Համակարգիչներ և մասեր	116.0	607.5
Alphabet	ԱՄՆ	2015	Ինտերնետային ծառայություններ	72	535.6
Microsoft	ԱՄՆ	1975	Համակարգչային ծրագրեր	114	439.7
Exxon Mobil	ԱՄՆ	1870	Նավթի և գազի արդյունաբերություն	72.7	350.9
Berkshire Hathaway	ԱՄՆ	1889	Ապահով., անշարժ գույք և այլն	367.7	349.7
Johnson & Johnson	ԱՄՆ	1886	Առողջապահություն	126.4	300.6
General Electric	ԱՄՆ	1892	Արդյունաբերական ապրանքներ	295.0	295.5

Amazon	ԱՄՆ	1994	Ինաերնեաային ծառայություններ	341.4	281.8
Facebook	ԱՄՆ	2004	Ինաերնեաային ծառայություններ	17.0	259.1
Wells Fargo	ԱՄՆ	1852	Բանկային ծառայություններ	269.1	246.0

Աղբյուր՝ World Economic Forum

Այսպիսով, եթե տաս տարի առաջ շուկայական կապիտալիզացիայի ծավալով խոշոր 10 վերազգային կորպորացիաների ցանկում գերակշռում էին էներգակիրների և բանկային համակարգի ոլորտում գործունեություն ծավալած ընկերությունները, ապա ներկայումս գերակշռում են բարձր տեխնոլոգիաների և հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն ծավալած ընկերությունները[5]:

4.2 Միջազգային տնտեսական կազմակերպություններ/ինստիտուտներ

Միջազգային տնտեսական կազմակերպությունների էությունը: Շատերը լսելով ինստիտուտ բառը դրա տակ հասկանում են ֆորմալ կազմակերպություն: Տնտեսագետները հակված են ավելի լայն առումով դիտարկել ինստիտուտներին: Օրինակ, «Նոր ինստիտուցիոնալիստները» Դուգլաս Նորֆի գլխավորությամբ գտնում են, որ կազմակերպություններն իրենք իրենց չեն հանդիսանում որպես ինստիտուտներ: Այս տեսակետից ելնելով ինստիտուտը դա կանոնների համախմբություն է, որը նշելով թույլատրելին և ոչ թույլատրելին կառավարում է վարքագիծը:

Այսպիսով՝ ինստիտուտները տրամադրում/ապահովում են վարքագծի կանոններ, որոնք սահմանափակում են սոցիալական, քաղաքական և տնտեսական փոխազդեցությունը: Եվ վերջապես ինստիտուտները լինում են ֆորմալ և ոչ ֆորմալ:

Միջազգային տնտեսական հարաբերություններում գլխավոր դեր են խաղում երեք միջազգային տնտեսական կազմակերպություններ: Դրանք են Արժույթի միջազգային

[5] 2006թ. ավյալներով շուկայկան կապիաալիզացիայի ծավալով առաջաաար 10 վերազգային կորպորացիաներն էին՝ «Exxon Mobil», «General Electric», «Gazprom», «Microsoft», «City group», «Bank of America», «Royal Dutch Shell», «BP», «Petro China» և «HSBC»:

հիմնադրամը (International Monetary Fund, IMF), Համաշխարհային բանկի խումբը (World Bank Group, WBG) և Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (World Trade Organization, WTO): Այս կազմակերպությունների կողմնակիցները պնդում են, որ դրանք շատ կարևոր դեր են խաղում միջազգային տնտեսական հարաբերություններում, քանի որ.

1. դրանք ներփակված են,
2. դրանք ստեղծել են մի շարք կանոններ, որոնք կառավարում են միջազգային տնտեսական հարաբերությունները,
3. դրանք հնարավորություն են տալիս քննարկել և բարելավել այդ կանոնները:

Միջազգային տնտեսական ինստիտուտների տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ: Հասարակությունը իրականում վստահում է միջազգային տնտեսական ինստիտուտներին, քանի որ դրանք նախատեսված են կարգ ու կանոն ստեղծելու և անորոշությունը կրճատելու համար: Ինստիտուտները՝ սահմանելով տնտեսական, քաղաքական և սոցիալական փոխհարաբերությունների սահմանափակումները, նպաստում են կայունության հաստատմանը: Տնտեսությունների զարգացման գործում անորոշության նվազեցումը շատ կարևոր գործոն է:

Յուրաքանչյուր երկրի ներսում վարքագծի ֆորմալ կանոնները սահմանվում են կառավարության տարբեր մակարդակների կողմից: Հակառակ դրան միջազգային ոլորտում բացակայում է կառավարությունը: Այդ պատճառով պատճառով միջազգային առևտրի և միջազգային մակրոտնտեսական հարաբերությունների կանոնները հաստատվում են ելնելով միջազգային տնտեսական կազմակերպություններին երկրների կամավոր մասնակցությունից:

Միջազգային տնտեսական կազմակերպությունների և առանձին երկրի կառավարության միջև հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ առաջինն ունի ազդեցության սահմանափակ ուժ: Այսինքն՝ երկրի կառավարությունն ունի քաղաքական ուժ, որը նա կարող է ցանկացած ժամանակ օգտագործել իր կանոնները հաստատելու համար: Միջազգային կազմակերպությունները չունեն քաղաքական ուժ, սակայն ունեն այսպես կոչված «թափանցիկ ուժ», որը խթանում է երկրների միջև համագործակցության զարգացմանը: Միջազգային տնտեսական ինստիտուտները համաշխարհային տնտեսության մեջ կատարում են հետևյալ ֆունկցիաները.

- տրամադրում են հանրային բարիքներ/ապրանքներ,
- հաստատում են կարգ ու կանոն և նվազեցնում են անորոշությունը

Հանրային ապրանքներ/բարիքներ: Հանրային ապրանքները դիտարկելիս մենք պետք է հաշվի առնենք հետևյալ երկու գործոնները.

1. դրանք ոչ բացառելի են,
2. դրանց սպառման ավելացմամբ օգտակարությունը չի նվազում:

Շուկաները հաճախ չեն կարողանում բավարար մակարդակով մատակարարել հանրային ապրանքներ, քանի որ տեղի ունի «Free Riding»-ի հիմնախնդիրը: «Free Riding»-ը այստեղ նշանակում է, որ հանրային ապրանքների համար վճարելու դրդապատճառ չկա, քանի որ մարդիկ չեն կարող բացառվել դրանց սպառումից: Այսպիսով, շուկաների կողմից հանրային ապրանքները երբեք չեն կարող արդյունավետ կերպով արտադրվել, քանի դեռ ինստիտուցիոնալ կարգավորմամբ չի լուծվել «Free Riding»-ի հիմնախնդիրը: «Free Riding»-ը տեղի ունի, երբ անհատը թույլ է տալիս մյուսներին վճարել ապրանքի կամ ծառայության համար կամ կատարել աշխատանք այն դեպքում, երբ նա գիտի, որ չի կարող բացառվել ապրանքի սպառման գործընթացից կամ աշխատանքից ստացվող օգուտներից:

Կարգ ու կանոնի հաստատում և անորոշության նվազեցում: Միջազգային տնտեսական ինստիտուտները համաշխարհային տնտեսության մեջ հաստատում են կարգ ու կանոն և նվազեցնում են անորոշությունը:

Միասին վերցրած այս երկու ֆունկցիաները հաճախ էական դեր են խաղում միջազգային տնտեսական ճգնաժամերից խուսափելու համար: Ամեն դեպքում, եթե երկրի (լոկալ) ճգնաժամը սպառնում է դառնալ միջազգային, ապա միջազգային ինստիտուտները մեծ դեր են կատարում, որպեսզի ազգային տնտեսական խնդիրները որքան հնարավոր է քիչ ազդեցություն ունենան այլ երկրների տնտեսությունների վրա:

Տնտեսագետ Չարլս Կինդելբերգերն առաջ է քաշել մի քանի ոլորտներ, որտեղ ինստիտուտներն անհրաժեշտ են, որպեսզի ընդլայնեն համագործակցությունը և կանխեն «Free Riding»-ի հիմնախնդիրը միջազգային հանրային ապրանքների ապահովման գործընթացում[6]: Այս առումով Կինդելբերգերը միջազգային մակարդակով դիտարկել է չորս հանրային ապրանքներ.

1. բաց շուկա ճգնաժամային իրավիճակում,
2. կապիտալի հոսք դեպի զարգացող երկրներ,
3. միջազգային փող,

[6] Kindlerberger, Charles. (1998) "The international Economic Order: Essays on Financial Crisis and International Public Goods", Hertford shire, England: Harvester-Wheat sheaf

4. փոխառությունների կոորդինացում:

Համաձայն Կինդելբերգերի, այս հանրային ապրանքներն ապահովող կանոնների բացակայությունը սովորաբար հանդիսանում է ճգնաժամերի հիմնական պատճառը: Օրինակի համար դիտարկենք առաջին միջազգային հանրային ապրանքը: Ճգնաժամային տարիներին տեղական զբաղվածության մակարդակը պահպանելու համար քաղաքական գործիչների վրա մեծ ճնշումներ են գործադրվում տեղական շուկան «փակելու» համար: 1930-ական թվականներին շատ երկրներ ներմուծման վրա կիրառեցին բարձր տարիֆներ և սահմանափակումներ: Արդյունքում դա շղթայական ռեակցիայով անդրադարձավ միջազգային առևտրում ներգրավված մասնակիցների վրա, որը վերջնական արդյունքում բերեց միջազգային առևտրի զգալի կրճատման:

Կինդելբերգերը նշում է նաև, որ 1930-ական թվականներին կապիտալի հոսքի զգալի կրճատումը դեպի զարգացող երկրներ նույնպես խորացրեց ճգնաժամը: Ժամանակավոր ֆինանսական խնդիրներ ունեցող երկրների համար փոխառություններ վերցնելու հնարավորության բացակայությունը շատ վատ կարող է անդրադառնալ տնտեսության վրա ի վերջո բերելով ֆինանսական ճգնաժամի:

Միջազգային տնտեսական ինստիտուտները և ազգային սուվերենությունը/ինքնիշխանությունը: Ազգային սուվերենությունը վերագրվում է յուրաքանչյուր երկրի իրավունքին լինել ազատ արտաքին միջամտությունից: Միջազգային ինստիտուտներն անդամակցության համար նախապայմաններ կիրառելով սահմանափակում են առանձին երկրների կառավարությունների թույլատրելի գործունեությունները՝ դրանով իսկ բարդացնելով սուվերենության հիմնախնդիրը: Օրինակ զարգացող երկրները, որոնք փոխառություններ են վերցնում IMF-ից, երբեմն իրենց դժգոհությունն են հայտնում այն փոփոխությունների համար, որոնք նրանք պետք է իրականացնեն իրենց տեղական քաղաքականության մեջ: Մյուս կողմից շատ զարգացած երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, որոշ քաղաքական գործիչներ գտնում են, որ միջազգային տնտեսական ինստիտուտները, օրինակ՝ WTO-ն, նվազեցնում են ԱՄՆ-ի սուվերենությունը՝ հնարավորություն տալով մյուսներին ընդունել կանոններ, որոնք սահմանափակում են ԱՄՆ-ի քաղաքականությունը:

Միջազգային տնտեսական ինստիտուտները և սառը պատերազմի ավարտը: Երբ 1989թ. քանդվեց «Բեռլինի պատը» Գերմանիայի Ֆեդերատիվ հանրապետությունը շարժվեց դեպի ինտեգրացում իր արևելյան մասի հետ: 1991թ. դեկտեմբերի 24-ին փլուզվեց Խորհրդային Միությունը և արդյունքում առաջացան 15 նոր անկախ հանրապետություններ:

Արդյունքում Ճապոնիայի և Եվրոպայի ծաղկումը, Հարավ Արևելյան Ասիայի որոշ երկրների արագ տնտեսական աճը և Չինաստանի որպես «հզոր» տնտեսություն հայտնվելն առաջացրեցին տնտեսական ուժի մի քանի աշխարհագրական կենտրոններ:

Հիմնական հարցը կայանում էր նրանում, թե արդյոք միջազգային տնտեսական ինստիտուտները, որոնք առաջացել են ԱՄՆ-ի գլխավորությամբ II Համաշխարհային պատերազմից հետո կարո՞ղ են գոյատևել գլոբալ ուժի մի քանի աշխարհագրական կենտրոններ տեղափոխվելու պայմաններում: Որոշ տնտեսագետների և քաղաքական գործիչների կարծիքով այդ ինստիտուտներն այնքան են կախված ԱՄՆ-ից, որ դրանք չեն կարող գոյատևել Ասիայի և Եվրոպայի հարաբերական տնտեսական քաղաքական ուժի զարգացման պայմաններում:

Միջազգային տնտեսական ինստիտուտների հաջողության բացահայտումը: Միջազգային տնտեսական ինստիտուտների հաջողությունը հիմնականում բացատրվում է երեք հիմնական պատճառով: Առաջին հերթին դրանց ստեղծման ժամանակ ընդգրկվել են քիչ երկրներ: Օրինակի համար Բրետոն-Վուդսի համաձայնագիրը կնքվել է 29 երկրների կողմից, իսկ մինչև կոնֆերենցիան աշխատանքների մեծ մասը կատարվել են ԱՄՆ-ի և Անգլիայի կողմից: Նմանապես GATT-ի համաձայնագիրը կնքվել է 23 երկրների կողմից: Ակնհայտորեն բանակցություններն ավելի հեշտ կընթանան, եթե դրանք արտահայտում են 23 երկրների շահերն այլ ոչ թե հարյուրից ավելի երկրների շահերը: Համեմատաբար քիչ երկրները ոչ միայն հեշտացնում են բանակցություններն, այլ նաև նվազեցնում են ԱՄՆ-ի «առաջնորդ» լինելու ծախսերը: II Համաշխարհային պատերազմից հետո առաջին տասնամյակում ԱՄՆ ցանկություն հայտնեց կիսել տնտեսական կայունության օգուտները: Օրինակ՝ փոխարեն կիրառելու պատժիչ պայմաններ Գերմանիայի և Ճապոնիայի նկատմամբ (ինչպես դա կատարվեց I Համաշխարհային պատերազմի ավարտից հետո) II Համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԱՄՆ ստեղծեց Մարշալի պլանը Եվրոպայի համար և Դոդջի պլանը Ճապոնիայի համար, որպեսզի նպաստի այդ երկրների տնտեսական և քաղաքական վերակառուցմանը:

Որոշ տնտեսագետներ կարծում են, որ երկրորդ պատճառը, որի միջոցով միջազգային տնտեսական ինստիտուտները հաջողության են հասել դա քեյնսյան տնտեսագիտության

քաղաքականության կիրառումն էր զարգացած երկրների կառավարությունների կողմից, որը ապահովում էր ավելի շատ միջազգային բացվածություն:

Եվ վերջապես երրորդ պատճառը դա այն է, որ գրեթե բոլոր երկրները հետպատերազմյան շրջանը սկսեցին բավականին փակ շուկաներով:

1970-ական թվականների սկզբից աշխարհը սկսեց փոխվել: Առաջին հերթին Գերմանիայի և Ճապոնիայի տնտեսական հաջողությունները նվազեցրեցին ԱՄՆ-ի ցանկությունը կրել միջազգային հանրային ապրանքներ մատակարարելու բեռը:

Այսպիսով՝ միջազգային ինստիտուտների գոյատևման խնդիրը պարզաբանելու համար դիտարկենք երկու տեսակետ: Առաջին տեսակետը առաջ են քաշել քաղաքագետների մի խումբ, որոնց անվանում են «ռեալիստներ», իսկ երկրորդ տեսակետը «ինստիտուցիոնալիստները»[7]:

Համաձայն ռեալիստների համագործակցությունը դա ԱՄՆ-ի լիդերության արդյունքն է: Քանի դեռ ԱՄՆ ցանկանում է և ընդունակ է մատուցել կարգ ու կանոն և նվազեցնել անորոշությունը համաշխարհային տնտեսության մեջ այնքան նրա կողմից գլխավորվող ինստիտուտները կգոյատևեն: Ռեալիստների կարծիքով այդ ինստիտուտները ԱՄՆ-ի ուժի տարածման և պահպանման համար են, եթե հանկարծ ԱՄՆ իր գերիշխող դիրքը զիջի, ապա նրա կողմից գլխավորվող ինստիտուտները կքայքայվեն:

Համաձայն ինստիտուցիոնալիստների լիդերներն առաջանում են պարբերաբար և հաճախ ստեղծում են մի շարք ինստիտուտներ, որոնք հետագայում դառնում են որոշ չափով անկախ: Այսինքն՝ խաղի կանոնները, որոնք որոշվում և սահմանվում են լիդերի կողմից, չնայած ուժի նվազմանը, կարող են շարունակել արդյունավետ գործել:

[7] Kenen, Peter B. (1994) "Managing the World Economy: Fifty Years after Breton Woods " , Washington DC, Institute for International Economics